ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2022 թվականի N 89-Ա

ԱՆԱՀԻՏ ԿՈՆՋՈՌՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՓՅՈՒՆԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2022 թվականի փետրվարի 21-ի N 2 արձանագրությունը *(որոշումը)* և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2022 թվականի մարտի 10-ի N 82-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Անահիտ Նիկոլայի Կոնջորյանին*** 2022 թվականի մարտի 11-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մարտի 11
ք. Հրազդան